



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4405

281-64
4-31

Կարիս
տպագր. Արմենի 1856

12010

Умеренность Залупа

Умеренность , 1856

47

31.64
-30
11039

9

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՏՃԱՌՔ

Վ Ե Ր Ա Դ Ա Ր Ձ Ի

ԵՐԻՑ ՎԱՐԴԱՊԵՏԱՅՍ ՀԱՅՈՑ

ՍԱՐԳՍԻ, ԳԱԲՐԻԷԼԻ ԵՒ ԱՄԲՐՈՍԵԱՅ

ԸՆԴ ՀՈՎԱՆԵԱՒ

ԼՈՒՍԱԽՈՐԶԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Այսպիսի ժամանակ մը որ ազգերնիս իբրեւ ի խոր
քնոյ արթըննալով՝ աչուրները կը դարձընէ որպէս միշտ
առ. Աստուած հարցն իւրոց, եւ միանգամայն գուարրա-
գին յուսով մը կը նայի առ. արշալոյսն գիտութեան
եւ քաղաքակրթութեան, այսպիսի ժամանակ մը որ
Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ վարատական բայց
հաւատարիմ որդիքը աշխարհիս ամէն կողմէն՝ տար
սրտով ու վառ վրձուքն հոգւով առ. նա կը դիմէն իբրեւ
ի մի միայն կեդրոն միութեան ազգասէր սրտից, —
այսպիսի ժամանակ մը՝ կըսեմ, որ ազգային Եկե-

281.60
17-30



դեցույ ուղղափառ դասանութիւնը, եւ ազգիս Հայոց
ընտիր յատկութիւնները օրե օր աւելի պայծառա-
նայու վրայ են նաեւ օտար ազգաց առջեւ, — ամե-
նայն կերպով իրաւացի, օգտակար ու հարկաւոր
կրճանջնանք տեղեակ ընել մերագնեայ եղբայրները
այն ամենայն բարոյական եւ կրօնական շարժմանց
եւ դիպուածոց՝ որ շատ եւ կամ սակաւ արժանի են
իրենց մտադրութեանը, մանաւանդ՝ երբ այն պա-
տահմանց մեջ գտնուող գլխաւոր անձինքը մենք ենք,
եւ ազգային օրագիրք սկսեր են անոնց վրայ խօսիլ :

Աշխարհիս վրայ գործ մը չենք տեսներ որ առանց
պատճառի ըլլայ, եւ մինչեւ որ պատճառը չգիտ-
նանք՝ գործոյն ինչ ըլլայն անկարելի է որ ուղղու-
թեամբ հասկընանք : Ուստի զարմանք չէ տեսնելն
որ շատ մարդիկ՝ գործողութիւն մը պատահելուն պէս
կըղատեն, ու կըգովեն կամ կըպարսաւեն զայն՝ ա-
ռանց պատճառը քննելու, եւ մեծապէս կըսխալին .
հարկ է անոնց սխալմունքը որչափ որ կարելի է ուղ-
ղել՝ գործն ու պատճառը ճշդութեամբ մեջ բերելով :

Այս տարի, այս օրերս ալ պատահեցաւ մեկ
ազգային գործողութիւն մը՝ շատին մտադրութիւնը
գրաւոր կամ հետաքրքրութիւնը շարժող (ինչպէս
որ անցեալ տարի ալ սոյն ատեններս Մուրատեան
վարժարանին վերջի դիպուածները ամենուն խօսակ-



ցութեանը նիւթ եղեր էին). այս ինքն երից վարդապետացս՝ երբեմն Մխիթարեանց՝ Հռովմայ արժուոյն իրաւասութենէն զատուելով ելլելով՝ սրբոյ Լուսաւորչին մերոյ արժուակայ եւ ժառանգորդ Սրբազան Կարողիկոսին իրաւասութեանը տակ մտնելը : Այս է ահա աշխարհածանօթ գործողութիւնը : Ի՞նչ է արդէօք այս գործողութեան պատճառը : — Կրփութեանը մենք առաջինն ըլլալու որ զայն ալ լիով բացատրենք՝ ի հմտութիւն եւ ի շինութիւն մտաց ներկայ համագգեաց, եւ յիշատակ ապագայից. վասն զի գիտենք որ այս բացատրութեան իրաւամբ կըստպասեն մեզմէ թէ Լուսաւորչական ազգայինք՝ ընդ որս բոլորովին միացանք, թէ հռովմեականք՝ յորոց զատուեցանք, եւ թէ անոնք որ թեպէտ օտարազգի են՝ բայց ինչ եւ իցե երեւելի դիպուած մը որ պատահի մեր ազգին մեջ՝ իրաւացի հետաքրքրութիւն մը ունին իմանալու¹ :

¹ Այս առթոյն վենետիկոյ Մխիթարեան Հարց հակառակ բան մը խօսելու ոչ կարօտութիւն ունինք եւ ոչ դիտաւորութիւն. որովհետեւ (ինչպէս որ ուրիշ անգամ հրատարակեցինք) խօսք տուած ենք Փարիզու Օսմանեան դեսպանին որ անոնց դէմ ուղղակի բշնամութիւն գրգռող գրուածքներ չհանենք :

5956
04

... (միմ Գրեմ Գ. Կիմ ցմաճգար
մյուսագա Գանկու... քմաճգար... մեճգրճ արուաճի
... Ս. ...

Հայոց ազգիս գլխուն եկած ողբալի թշուառութեանց մեջ ամենէն մեծը՝ ոչ անոր աշխարհիս ամեն կողմը ցրուած ըլլալը կրկարծենք, ոչ հայրենի երկրին աւերմունքները, ոչ լեզուին պղտորութիւնը, ոչ նիւթական աղքատութիւնը, ոչ տասներհինգ քսան միլիոնէն չորս հինգ միլիոնի իջնալը. ոչ, ոչ. հապա մեր ազգին թշուառութեանը ամենամեծ պատճառ կրճանցնանք ներքին եւ կրօնական երկպառակութիւնները, որով օր ըստ օրէ տկարացեր՝ նուագեր՝ ցրուեր՝ օտար ազգաց մեջ ընկղմեր, եւ անմիաբանութեան պծգալի պարսաւին արժանի տեսնուեր է :

Տարակոյս չունինք որ մեր համազգի եղբայրները՝ ինչ դաւանանքի տէր ալ ըլլան, կըվկայեն խօսքերնուս ճշմարտութեանը, եւ կըներեն մեզի ցաւալի խորհրդածութիւնմը միայն աւելցընել երկու խօսքով՝ թէ այն է զարմանալին որ այս կրօնական կոիւնտերն ու բաժանմունքները ոչ թէ ազգիս՝ հեթանոսութեան խաւարին մեջ ընկղմած ատենները կըպատահին, այլ քրիստոնէութեան լոյսը արեգական պէս պայծառ կերպով անոր վրայ զարկած ժամանակը, եւ սյն մայր Եկեղեցւոյն մեջ՝ ուր որ շող աստուածեղէն ի Հօրէն լուսոյ ծագեաց, եւ որոյ որդիքը իրաւամբ

202
22
24

կըպարծին իբրեւ որդիք լուսոյ եւ որդիք տուրնջեան :
Բնքե . այսպէս ուրեմն Աւետարանն սուրբ , որ աղ-
բիւր է անապակ սիրոյ եւ երանաւէտ խաղաղութեան ,
գործիք եղեր է նաեւ մերազնեայց ձեռքը , — ինչպէս
նաեւ ուրիշ շատ քրիստոնեայ ազգաց , — անհաշտ
ատելութեան եւ անդադար կռուոյ եւ խռովութեան
իրարու դեմ : Կարծես թէ նիւթապէս միայն հասկը-
ցուեր է Քրիստոսի Տեառն մերոյ ցաւագին սրտի-
գուշակածը թէ « Ոչ էկի խաղաղութիւն արկանել յեր-
կիր , այլ սուր , այլ բաժինս : ¹ » Չե մտածուած թէ
այս գուշակութիւնը անոնց համար է միայն ' որ ջու-
գէն պիտի մտիկ ընել միւս խօսքերուն թէ « Ամենքին
դուք եղբարք էք ² : Յայսմ գիտասցեն ամենքեան էթե
իմ աշակերտք էք ' էթե սիրիցէք զմիմեանս ³ : Խաղա-
ղութիւն բողոսմ ձեզ , զխաղաղութիւն զիմ տամ ձեզ : ⁴ »

Բ .

Այնպիսի խռովութեանց եւ կրօնական կռիւնե-
րու առաջին պատճառ ' բանասրկու սատանան է կը-
սեն սուրբ գիրք եւ աստուածարեալ վարդապետք . եւ

¹ Մատթ . Ժ , 34 : — Ղուկ . ԺԲ , 31 :

² Մատթ . ԻԳ , 8 :

³ Յովհ . ԺԳ , 31 :

⁴ Յովհ . ԺԳ , 27 :

ասոր տարակոյս ջկայ : Բայց սատանային ջարու-
թեանը գործիք ո՛վ եղած ըլլալը դիտելու արժանի է.
մեծապէս խրատ առնելու բան է : Մենք զայս գի-
տենք ու կրհաստատենք որ մեր ազգին մեջ կրօնա-
կան վեճեր ու երկպառակութիւններ սերմանողները
թեպէտ օտարք եղեր են, բայց այն ջար սերմունքը
անեցրնողները եղած են միշտ ազգայինք ոմանք :

Եւ նախ սրբոյն Սահակայ օրերէն մինչեւ Շնորհա-
լի հայրապետին օրերը ազգիս մեջէն շատ մարդիկ
կամայ էւ ակամայ Յունաց տերութեանն ու անոնց
Եկեղեցւոյն կողմը բռնելով՝ անբիւ անիրաւութեանց
ու տառապանաց պատճառ եղան ազգային անմեղ
Եկեղեցւոյն առաջնորդացը : Յաւագին սրտով գան-
գատ կը գրէր սուրբն Սահակ առ կայսրն Թեոդոս թէ
« Ոչ հանդիպեցայ ընդունելութեան յիմում վիճակիս
« (որ ի բաժնին Յունաց) ի հրամանէ վերակացունացս
« սոցա . այնչափ ատեցեալ զմեզ՝ մինչեւ զնշանա-
« գիրս անգամ ոչ ընկալան զորս եբեր նոյն այր
« (սուրբն Մեսրոպ)՝ : » — Կըբողոքէր էւ Շնորհալին եօ-
թը հարիւր տարի ետքը առ Մանուէլ կայսրը թէ
« Չերդ եկեղեցական դասք էւ ուամիկ ժողովուրդք
« իբրեւ զարդարութիւն ունին էւ զաստուածային պա-

¹ Խորեն . Գ, 57.

« տութիւնաց կատարումն, եւ գարբայութիւնն երկ-
« նից ժառանգելոյ բաւական պատճառ,՝ գատելն զմեզ
« եւ զհայհոյելն... (եւ այս բազում անգամ) ի գրպար-
« տութենէ զոր ատելութիւնն ծնանի եւ ի ստաբանու-
« քենէ *ոմանց աներկէղից ի մէջ առ ձեզ հատուածելոց,*
« եւ զմերս աղարտելով կարգաւորութիւն ի հաճոյս
« ձեր կարծելով՝ : »

Վրան հարիւր տարի հագիւ թէ անցեր էր, Լատի-
նացիք սկսան այնպիսի քարոզիչներ դրկել Հայաս-
տան որ իրենց տգիտութեամբն ու անխոհեմ նախան-
ճայութեամբը տակնուվրայ ըրին մեր ազգին
ներքին եւ արտաքին հանգստութիւնը: Բայց անոնց
այ ըրած վնասները այնչափ չէին մեծնար՝ թէ որ
իրենց խռովարարութեանը յարմար զործիք չգտնէին
Ապարանցւոյն պէս, Քոնեցւոյն պէս, Ներսէս Պա-
ղունցիին պէս, Սիմոն Բեկիին պէս, մէկ խօսքով՝ Ունիթօ-
ուաց եւ անոնց յաջորդ եւ հետեւող խումբ խումբ
հռովմեական քարոզչաց պէս ազգատեաց մարդիկ,
որ մութ ջմնաց որ չքրսեն Հայաստանեայց Եկեղեցւոյ
անարատ վարդապետութեանը վրայ, որպէս զի իրենք
միայն *ուղղամիառ* ճանչցուին օտար ազգաց առջեւ,

՝ Ս. Ներս. Կլայ. Պատասխանի առաջին բղբոյ թագաւորին
Հոռոմոց Մանուէլի:

է. անոնցմէ պատիւ գտնան իբրեւ ճշմարտասեր
անձինք:

Գ.

Գիտեն արդէն ընթերցողք թէ Վենետկոյ Մխիթարեան միաբանութիւնը ինչ պարագաներէ ստիպուած է. ինչ կերպով 1854ին նոր յայտարարութիւն կամ դաւանանք մը տուաւ պապական արժուոյն. այն դաւանութեան մեջ կըսէին Մխիթարեանք թէ « Հռովմայ Եկեղեցւոյն իշխանութենէն բաժանեալ Հայերը արտաքոյ են ճշմարիտ Եկեղեցւոյն Քրիստոսի: » Եւ որովհետեւ շատ մը հռովմեական աստուածաբանից խօսքին նայելով՝ « Արտաքոյ Եկեղեցւոյն Հռովմայ չիք փրկութիւն, » — որ թէ որչափ անտեղի գործուածք է՝ շատոնց հասկըցած են ողջամիտ աստուածաբանք, — ուստի Հայոց Եկեղեցւոյն անմեղ որդիքն ալ փրկութենէ անյոյս է. արքայութենէ գուրկ պիտի սեպուէին այնուհետեւ՝ նաեւ Մխիթարեանց վկայութեամբը:

Եւ ահա այնպիսի դաւանանքի ձեռք դնել ջուզող Մխիթարեանց գլխաւորներն էղանք մեք էրեքին վարդապետքս որ ի Փարիզ. ուստի է. յանձն առինք մեր կարծեցեալ անհնազանդութենէն առաջ գայիք ամենայն հայաձանքները, թշնամանքներն ու տառապանքները, որ փոքր ի շատե գրուած են արդէն տպագրեալ Յայտարարութեան մեջ: *Կարծեցեալ*

անհնազանդութիւն ըսինք՝ ոչ միայն անոր համար
որ հաստատութեամբ դրած ենք մտքերնիս թէ « Հնա-
զանդէլ պարտ է Աստուծոյ առաւել քան մարդ-
կան¹, » այլ եւ անոր համար որ համոզուած էինք եւ
ենք թէ այն դաւանութիւնը *ապօրինաւոր* կերպով
տրուած էր՝ եւս եւ ըստ սահմանադրութեան Միսիթա-
րեանց . ուստի անոր ձեռք չդնողը՝ եւ ոչ կրօնաւորա-
կան հնազանդութեանը դէմ գործ մը ըրած պիտի
համարուէր :

Դ.

Ստոյգ գիտեինք յայլմէ կողմանէ թէ այսպիսի քա-
ջութեան մը փոխարէն ուրիշ բանի չէինք կրնար
սպասել ազգային եւ օտարազգի առաջնորդներէ՝
բայց էրէ նեղութեան եւ հալածանաց . սակայն կար-
ծեցինք առջի բերան թէ գուցէ Միսիթարեան միա-
բանութենէն զատուելիս բաւական ըլլայ զմեզ այն
հալածանքներէն ազատ պահելու : Եւ անշուշտ այ
ազատ կըմնայինք՝ էրէ ուզեինք մենք այլ այն միաբա-
նութենէն առեւնով զատուած ուրիշ բանի մը անձանց
պէս ինքզինքնիս յանգործութիւն դատապարտել, եւ
զրէթէ ողջ ողջ բաղուիլ : Բայց մեր միտքը այն չէր

¹ Գործ . Ե , 29 :

ամենեւին, եւ այն ջեր կրնար ըլլալ : Խելքերնիս մըտ-
քերնիս այս էր որ՝ գոնէ անագան՝ մեր խղճին վը-
կայած ճշմարտութեան կրցածնուս ջափ հպատա-
կինք . այս ինքն Հայաստանեայց Եկեղեցւոյ ուղղա-
փառութիւնը աներկիւղ հռչակենք ու շատագովենք,
եւ Հայոց ազգիս մանկունքը առանց հայրենաւանդ
ուղիղ հաւատքնին ուրացընելու հրահանգենք ու
կրթենք :

Եղան այն միջոցին շատ մը խոհական անձինք՝
ոչ միայն մեր ազգէն, այլ եւ օտարներէն, որ ըսին
մեզի թէ « Անհնարին է որ կարենաք այդ ձեր վախ-
ճաններուն հասնիլ՝ քանի որ Հռովմայ աթոռոյն տի-
րապետութեանը հպատակող առաջնորդաց իշխա-
նութեան տակը մնաք » : Մեր խիղճն ու փորձառու-
թիւնն ալ կը վկայէր անոնց խօսքին ճշմարտութեանը,
եւ գանազան ապացոյցներն ալ օրէ օր տեսնելու վրայ
էինք . բայց մեկ կողմանէ գրեթէ յոգնած ու ճանճ-
րացած էինք մեր վրայ խօսիլ տալէն ազգայնոց եւ
օտարաց . մեկալ կողմանէ ալ մեր ազգասիրութեանը
ուզածին ջափ ալ չըլլայ նէ՝ մեր կարողութեանը համե-
մատ ջափով աշխատանք որ գտնէինք ազգերնուս օգ-
տին համար, անով գոն ըլլայն արեւի կուգեինք՝ քան
թէ մեծամեծ գործողութեանց ձեռք գարնել :

Ե.

Այն զգացմանց մեջ էինք ահա երբոր տպագրեցինք Մուրատեան վարժարանին վերջի դիպուածներուն պատմութեանը 222 էրեսին մեջ այս խօսքերս թէ « Ուղղափառ հայ վարդապետներ ենք մենք՝ Հռովմայ սուրբ ընդհանրական եւ առաքելական Եկեղեցւոյն վարդապետութեանը հետեւողք *ի հաւատոյս*, « եւ նոյնպէս պիտի ըլլանք մինչեւ ցման Աստուծոյ շնորհիւր : » Յայտնի բան է թէ այն խօսքին մեջ *ի հաւատոյս* ըսելով՝ մեր միտքն էր *հաւատոյ էական մասունքը* միայն հասկընալ, եւ ոչ երբէք այն անիրաւ եւ անտեղի նորաձեւութիւններն որ Հռովմայ արձուցն հպատակող աստուածաբանները կուգեն իբրեւ *հաւատոյ մասունք* ընդունիլ տալ տգիտաց, ինչպէս են Պապին գերագոյն իրաւասութիւնը ի վերայ ամենայն Եկեղեցեաց՝ իբրեւ մի միայն փոխանորդ Քրիստոսի, անոր անսխալութիւնը, ընդհանուր ժողովե մը աւելի մեծ իշխանութիւն ունիմ ըսելը, որ է իցե աստուածաբանական անորոշ խնդիր կամ կարծիք՝ իր անձնական հեղինակութեամբը կամ թէ մասնական ժողովով իբրեւ մասն հաւատոյ հաստատելը, եւ անոր դեմ խօսողները հերետիկոս ու հերձուածող են ըսելով դատապարտելը, եւ այլն եւ այլն : Սա-

կայն կրխոստովանինք որ ամենայն կերպով իրա-
ւունք ունեին այն համազգիք որ կարծես թէ մտքեր-
նին դրեր էին որ մենք իբր թէ *արդէն* դարձեր մտեր
ենք նորեն Հայաստանեայց Եկեղեցւոյ առաջնորդաց
իշխանութեան տակը. ուստի էւ տեսնելով թէ այն մեր
դաւանութիւնը ուրիշ *պապական* վարդապետաց դաւա-
նութենէն տարբերութիւն մը չունի՝ գայթակդեր ու վըշ-
տացեր էին: Այն միջոցին համար սխալ էր կարծիքնին.
Բայց էւ հարկ չհամարեցանք գրաւոր պատասխան
մը հրատարակել իրենց մեղադրութեանը դէմ: Իսկ
հիմա որ փոխուեցաւ վիճակնիս, պարտք կը համա-
մարինք մեզի քիչ մը աւելի բացատրել՝ թէ ինչո՞ւ
համար կամ ինչ մտքով *Հռովմայ* անունը մեզ բե-
րինք հոն, էւ թէ *հաւատոյ Հական մասունք* ըսելով
ինչ կը հասկընանք հոս:

Զ.

Այն Յայտարարութիւնը գրած ատեննիս ինչ վիճակի
մեջ էինք մենք. — ամբաստանութիւն չկար որ չընեին
վրանիս անունք որ իրենց անլուր գործողութիւնը ար-
դարացընելու կարօտ էին՝ մեր վրայ մեծամեծ յան-
ցանքներ շփելով. այսինքն անհնազանդութիւն, ապրս-
տամբութիւն, անհաւատարմութիւն, յանդգնութիւն,
խռովարարութիւն, էւ այլն էւ այլն: Բայց որովհե-
տէւ Եկեղեցական անձինք էինք՝ Գաղղիոյ պէս կա-

թուիկ երկրի մը մեջ մինչեւ այն օրերը *Կաթուղի* ճանջ-
ցուած, ուստի եւ իբրեւ բովանդակութիւն այն ամե-
նայն ամբաստանութեանց այս խօսքս հաներ էին մեր
վրայ որ իբր թէ մենք հաւատոյ վարդապետութեան
մեջ ալ կասկածելի ենք, անտարբերեայ ենք, *և որ*
աղանդ մը հնարելու ետեւէ ենք. անոր համար *հոռի-*
մէական իշխանաւորաց եւ Փարիզոս Գերապատիւ
արքեպիսկոպոսին ոչ միայն պաշտպանութեանը
արժանի չենք, այլ եւ ոչ գթութեանն ու կարեկցութեա-
նը. պետք է որ քշուինք հալածուինք Փարիզէն, եւ երե
կարելի է՝ բոլոր Գաղղիայէն, եւ աշխարհիս երե-
սէն: Դարձեալ եւ այն հռովմեական ծնողք որ իրենց
զակրներուն դաստիարակութիւնը մեզի յանձներ էին
տարիներով, եւ կատարեալ վստահութեամբ, այս
ամբաստանութեանց վրայ ուրիշ ամէն բանէ աւելի
գայթակղելով՝ կերպով մը իրաւունք կուտային զմեզ
չարչարողներուն:

Է.

Այնպիսի պարագաներու մեջ, եւ քանի որ դեռ հռով-
մեական առաջնորդներուն լուծը բօթվելու որոշ դի-
տաւորութիւնը չունեինք, Հոռիմայ Եկեղեցւոյն ա-
նուանը տակ գէթ առ ժամանակ մի պատասպարուիլը
հարկաւոր սեպեցինք՝ գրեթէ նոյն իմաստով որով եր-

բեմն եւ սուրբն Պօղոս իր կեանքը վերցընել ուզող
թշնամիներուն դեմ բողոքեր եր թե *Հռովմայեցի եմ* .
ուրիշ անգամ մըն ալ աղաղակեր եր թե *Փարիսեցի եմ*,
եւ այնպէս անոնց անիրաւ բռնութիւններէն առ ժամն
ազատեր եր ¹ : Թերեւս աւելորդ է ըսելը թե Առաքե-
լոյն խօսքին մէջ ոչ ստութիւն կար եւ ոչ կեղծաւո-
րութիւն . քնն լիցի . վասն զի իրացընէ ալ *ըստ քա-
ղաքական իրաւանց Հռովմայեցի* գրուած եր , եւ *ըստ
նախանձայուղութեան մովսիսական օրինաց՝ Փարի-
սեցի* : Զարմանք չէ ուրեմն թե որ մենք ալ *հռովմէա-
կան* հայ ըլլալնիս մէջ բերինք՝ ամեն բանէ առաջ այս
ցուցընելու մտքով թե մենք նոր աղանդ մը հնարել
ուզող մարդիկ չենք , եւ թե բողոքական (*փրօթէսթանթ*)
անունը՝ որ սկսեր էին ոմանք դնել մեր վրայ նաեւ ի
Պօլիս՝ չենք ընդունիր ամենեւին , այլ եմք վարդապետք
եւ որդիք *Միայնոյ, Սուրբ, Կաթողիկէ եւ Առաքելական*
Եկեղեցւոյ :

Բայց որպէս զի չկարծուի թե նորաղանդից շատե-
րուն պէս՝ մենք ալ մտացածին Եկեղեցւոյ մը կը-
յարմարցընենք այդ մակդիրները , *Հռովմայ* անունը յա-
ռաջ բերինք՝ քանի որ հարկ եւ խոհեմութիւն չէինք հա-
մարեր անոր տեղը *Հայաստանեայց Եկեղեցւոյ* անունը

¹ Գործ . ԺԶ, 37, 38. ԻԳ, 6 : Փիլիպ . Գ, 5 :

տալով՝ մեր թշնամեաց կիրքը գայրացընել, եւ անոնց
ըրած գրպարտութիւններուն մեր բերնովը ոյժ տալ:
Մտքերնիս ալ դրած էինք թէ ասոր վրայ շատ ջէն գայ-
թակոյիք մեր համակրօն եղբայրները. վասն զի գի-
տէինք թէ ոչ երբէք ժխտեր են նաեւ իրենք թէ Հոով-
մայ Եկեղեցին ալ արժանի է ամենայն մեծարանաց՝
որպէս եւ իրենց սեպհական Հայաստանեայց սուրբ
Եկեղեցին: Ասով մենք ալ պիտի ջմեղադրուէինք խօսք
հասկըցող ու արդարասէր անձանցմէ՝ թէ ինչո՞ւ հա-
մար *Հոովմայ Եկեղեցոյն վարդապետութեանը հետե-
ւողք ենք ի հաւատոյս* ըսեր ենք՝ վերոյիշեալ պարա-
գաներուն մէջ գտնուելով:

Ը.

Յիշեցինք վերը նաեւ այս հարկաւոր գիտելիքը թէ
ի հաւատոյս՝ այսինքն *հաւատոյ բաներուն մէջ* ըսելով՝
քրիստոնեական ուղղափառ հաւատոյ *հական մա-
սունքը միայն* կը հասկընայինք եւ կը հասկընանք, եւ ոչ
էթէ աստուածաբանական մութ ու բարակ խնդիրները,
Եկեղեցական բարեկարգութեան գանազան ճիւղերը,
արարողութիւնները, ծեսերը, սովորութիւնները եւ
այլն, որ հաւատոյ իսկութեանը ամենեւին վնաս մը
ջէն ըներ՝ որչափ ալ տարբեր տարբեր ըլլան իրարմէ՝
ըստ աւանդութեան գանազան ազգաց եւ Եկեղեցեաց
ուղղափառ քրիստոնէից: Իսկ *հական մասունք հաւա-*

տոյ ըսելով կրհասկընանք, — ինչպէս որ պետք է
հասկընայ նաեւ ամենայն հաւատացեալ քրիստոնեայ,
— Նիկիական հանգանակը, այսինքն *Հաւատամքը*,
եւ այն ամենայն բացատրութիւնները որ տրուած են
անոր՝ *հասարակաց ընդունելի* սուրբ եւ տիեզերական
ժողովներէն, եւ մեր մեջ մասնաւորապէս ի սրբոյն
Ներսիսե Կլայեցւոյ, եւ իրեն շնորհալի ու խաղաղասեր
հոգւոյն հետեւող եւ ժառանգորդ սուրբ հայրապետնե-
րէն ու հմուտ վարդապետներէն՝ մինչեւ մեր օրերը :
Իսկ արդ այս *հաւատոյ հազան մասանց* վրայ Հռովմայ
Եկեղեցւոյն ունեցած բուն վարդապետութիւնները
ինչ տարբերութիւն ունին Հայաստանեայց Եկեղեցւոյ
վարդապետութիւններէն . — ապաքէն եւ ոչ ինչ, —
ինչպէս շատ անգամ ապացոյցներով հաստատուած
է . անոր համար ալ ե որ մեր ազգը իրաւամբ կը դը-
ժուարի՝ երբ որ Յոյնք եւ Հռովմայեցիք *Հերետիկոս*,
Հերձուածող, *Մոլորեալ* ըսելով կը նախատեն զինքն
ու իր ուղղափառ եկեղեցին, եւ չեն ուզեր ճանչնայ թե
անոր *հաւատոյ հազան մասանց* մեջ ունեցած վար-
դապետութիւնները իրենց վարդապետութեանցը հետ
բոյորովին համաձայն են :

Այս է ահա այն մեր տպագրութեամբ հրատարակած
անորոշ դաւանութեան անկեղծ եւ ճիշդ բացատրու-
թիւնը . որով յուսանք թե բնական կերպով մը
անկեց գայրակղեալ եղբարց միտքը կը բժշկուի :

Տեսները հիմա թէ ինչ առիթով հարկադրեցանք փութալու, եւ այն մեր կեղակարծ վիճակէն ալ ելլելով՝ բոլորովին Հայաստանեայց եկեղեցւոյ հարագատ հովուաց եւ առաջնորդաց իրաւասութեանը տակ մտնելու :

Թ.

Այս տարի ապրիլ ամսոյն մեջ մեզմէ Ամբրոսիոս վարդապետը գնաց ի Կոստանդնուպօլիս . հոն առաջին օրերէն ստուգեց անժխտելի ապացոյցներով որ շատ մը հռովմեական առաջնորդներ միաբաներ են մեջերնին՝ մինչեւ ի սպառ. հալածելու գմեզ, եւ մեր ամենայն ձեռնարկութիւնները յօգուտ մեր ազգին եւ եկեղեցւոյն՝ փնտրելու :

Այն ապացոյցներուն մէկն ալ այս էր որ Փարիզու Գեր. արքեպիսկոպոսը հարկ սեպեր էր գրով խոստանալ Հռովմայ արժոյն թէ « Սարգիս եւ Ամբրոսիոս վարդապետաց իրենց քահանայական պաշտօնը կատարելու հրաման պիտի չտամ իմ վիճակիս մեջ՝ մինչեւ որ իրենց մեծաւորին (Գ. Հիւրմիւզեանին) ջհնագանդին : » Եւ որովհետեւ այն վարդապետները հաստատութեամբ դրած էին մտքերնին թէ Գ. Հիւրմիւզեանին հնագանդութենէն անդառնալի կերպով էլեր են, ըսել կըլլար թէ քանի որ իրենք Փարիզու Գեր. արքեպիսկոպոսին վիճակին մեջ մնան՝ քահա-




5976
40

նայական պաշտօն կատարելէն յոյսերնին պիտի կտրեն : Դարձեալ, այս խոստմունքն ալ ըրէր էր որ « Այսուհետեւ ո՛ր է. իցէ հայ քահանայի հրաման պիտի ջտամ իմ վիճակիս մէջ պատարագ մատուցանելու » մինչեւ ջխոստանայ որ *հերձուածողաց* հետ հաղորդակցութիւն պիտի ջընէ ամենեւին ի հոգեւորս : » Ըսել կըլլար թէ անոնց միայն հրաման պիտի տամ իմ վիճակիս մէջ քահանայութիւն ջընելու, որոնք որ էրէ Լուսաւորջական հայ մը խոստովանցընել ու հաղորդել պէտք ջլլայ՝ առաջ կամ էտքը հայութիւնն ուրացընեն անոր :

Ժ.

Արդ անկողմնասէր ջնթերցողները կըտեսնեն անշուշտ յայտնապէս թէ մենք էրէքնիս որ արդէն այսպիսի հրամաններու մտիկ ջընել ջուգելնուս համար ջատուեր էլէր էինք Միսիթարեան միաբանութենէն, է. միանգամայն « Հայոց հետ հաղորդակցութիւն պէտք ջէ ջընել ի հոգեւորս » ջտողներուն դէմ կէցեր էինք, ջարմանք ջէր որ անապարէինք այնուհետեւ քաշուելու հեռանայու բոլորովին Հռովմայ Եկեղեցիէն ու անոր առաջնորդներուն իշխանութենէն, է. մեր ազգային անարատ Եկեղեցւոյն օրինաւոր է. սեպհական առաջնորդաց հովանաւորութեանն ու



իրանասութեանը տակ պատապարուելու : Եւ անա-
այնպէս այ ըրինք , ու երէքնիս միաբան հպատակու-
թեան գրէր գրեցինք սուրբ Էջմիածնի աստուածա-
բեայ Կարուղիկոսին եւ Կոստանդնուպօլսոյ սրբազան
Պատրիարքին : Եւ որովհետեւ նախ առ երկրորդն
գրէր էինք մեր հպատակութեան գիրը , առաջ անոր
օրինակը դնենք հոս :

« Ամենապատիւ Սրբազան Տէր ,

« Ի հերոսն հետե իսկ քաջածանօթ է Սրբութեանդ
« անձնանուէր նահատակութիւն երեցունցս ներքոյ
« գրեալ վարդապետաց , երբեմն Միսիթարեանց ' եւ
« զարդիս կամաւորապէս անշատելոց ի միաբանու-
« թենէ անտի , ի պաշտպանութիւն իրանանց Ազգիս
« մերոյ եւ ի շատագովութիւն ուղղափառ վարդա-
« պետութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ : Տեսեալ
« արդ յայտնապէս իմիոյ կողմանէ զանապառ եւ
« զանիրաւ հալածանսն յարուցեալս ի վերայ մեր
« յօտարախորթ առաջնորդաց , եւ լուեալ ի միւսմէն
« հաւաստեաւ եթէ Ազգն մեր մտադիր յօժարու-
« թեամբ կամիցի օգնական լինել մեզ բանիւք եւ ար-
« դեամբք յուսումնական եւ ի բարոյական զարգա-
« ցումն մերագնեայց , եւ թէ առ այս կարօտի միայն
« երաշխաւորութեան Ամենապատիւ Տէրութեանդ

« Ձերոյ՝ որպէս զի աներկմիտ վստահութեամբ յանձ-
« նեցեք ի մեզ զխնամս դաստիարակութեան որդւոց
« իւրոց, յայտ առնեմք ահա սովին գրութեամբ, զի
« եք արդարեւ հաւանեալ իցեք էւ Ձերդ Սրբութիւն
« օգտակարագոյն էւս գործել ազգակցացն մերոց
« զվաստակս մեր դուզնաբեայս՝ յորժամ ընդ Ձերովդ
« պատասպարիցիմք հոգեւորական իշխանութեամբ,
« մէք մերովսանն պատրաստ եմք ի սոյն, հրաժա-
« րելով ի սպառ ի հպատակութենէս մերմէ առ Պապն
« Հռովմայ էւ առ առաջնորդս կարգեալս ի նմանէ :
« Ոչ ինչ երկբայիմք, Ամենապատիւ Տէր, եք Ձերդ
« խոհական իմաստութիւն շատ գրեցեք զյայտարա-
« րութիւնս մեր զայս՝ առ ի կալոյ երաշխաւոր ողջ-
« մտութեանս մերում առաջի ճյր ուրուք էւ իցեք,
« որպէս էւ հաստատելոյ զմեզ յիշխանութեանս զոր
« ունիմք օրինաւոր ձեռնադրութեամբ ի կատարումն
« քահանայական էւ վարդապետական պաշտամանց :
« Նա զի էւ խոստանամք էւս կատարել զնոսին
« այսուհետեւ ըստ անխառն արարողութեան էւ
« ըստ հարազատ աւանդութեանց Հայաստանեայց
« առաքելական սուրբ Եկեղեցւոյ, զորոյ զվարդապե-
« տութիւնսն էւ զպաշտամունսն առ հասարակ ուղ-
« դափառականս ծանուցեալ եմք միշտ էւ ճանա-
« ջեմք, էւ ջատագով կամք նոցին էւ կացցուք Տե-
« րամբ մինչեւ ի վախճան բանի էւ գրով :

« Ակն ունելով օրհնառար պատասխանոյ Չերումդ
« Սրբութեան, խոնարհիմք ի համբոյր աստուածա-
« րեայ աջոյդ, եւ մնամք

« Ամենապատիւ Տերութեանդ

« Խոնարհ ծառայք եւ որդիք

ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԹԷՈԴՈՐԵԱՆ

ԳԱԲՐԻԷԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՅՎԱԶՈՎՍԳԻ

ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼՖԱՅԵԱՆ

Ի Փարիզ, 3 Մայիսի 1836. : »

ԺԱ.

Յետոյ սուրբ էջմիածնի արժանաժառանգ սրբա-
զան Կաթողիկոսին այլ յաջորդ նամակը գրեցինք,
եւ յուղարկեցինք Կոստանդնուպօյսոյ Ամենապատիւ
Պատրիարքին որ բարեհաճի տեղը հասցընել :

« Աստուածապատիւ Հոգեւոր Վեհապետիդ մերում
Տեառն Ներսիսի ամենայն Հայոց Սրբազան Կա-
թողիկոսի, խոնարհական ողջունիւ մեծարանաց
եւ համբուրիւ աստուածարեայ աջոյդ ի Տէր խնդայ :

« Ոչ ինչ գանխույ են արդեօք ի Չերմէ Սրբութենեդ,
« Աստուածապատիւ Տէր, վեպք անցիցն անցելոց

« ի Հայկազունս Տաճկաստանի՝ յանջատեալսն յամաց
« հետե ի բնիկ եւ ի սեպհական Հովուապետեղ իւ-
« րեանց, եւ մտեալս ընդ անընդմեջ հրամանօք Աթո-
« ռոյն Հռովմայեցւոց : Վասն որոյ եւ յուսամք թե
« Ձերդ Սրբութիւն ներեսցէ ներքոյ գրելոցս վարդա-
« պետաց առաջի առնել Տեառնդ կարճ ի կարճոյ
« եւեթ գմեր գերեցունցս երիցակցաց զիրս եւ զգործս
« յայն ամենայն յեղափոխութիւնս աղետալիս որ
« պատահեցին ի Կոստանդնուպօլիս եւ աստ ի Փարիզ
« քաղաքի :

« Յառաջ քան զամս տասն յերկուս պառակտեալ
« անուանեալն կաթոլիկ կամ հռովմեական ժողո-
« վուրդ Հայոց որ ի Կոստանդնուպօլիս, զամ քան
« զգամ աղմկեցաւ անհնարին զայրացմամբ մինչեւ
« ցսկիզբն արեւելեան պատերազմին : Միումն կող-
« ման պարագլուխ անցեալ կայր Գերապատիւ
« Անտոն Վարդապետ Հասունեան՝ Նախագահ
« եպիսկոպոս հռովմեականացն Հայոց, աշակերտ
« Ուրբանեան դպրոցին Հռովմայ, եւ ամենայն հրա-
« մանաց այնր Աթոռոյ հաւատարիմ պաշտօնեալ .
« եւ որ ընդ նմա միաբանեալ էին երիցունք եւ աշ-
« խարհիկք՝ լատինասերք մանաւանդ գոյով քան թե
« ազգասերք՝ արհամարհէին եւ անարգէին զամենայն
« ինչ զՀայոց : Իսկ միւսոյ կողմանն ջատագով եւ
« ձեռնտու եր գառաջինն Մխիթարեանցն միաբանու-

« քին որ ի Վենետիկ, ընդ իւր ունելով գմեծ կես
« հռովմեականացն Հայոց, որ յազգասիրութեան
« իմաստից իմն բերեալք՝ ջանահնար լինէին անկո-
« րուստ պահել գէթ զնշխարեալն իրաւունս ազգայ-
« նոյ Եկեղեցւոյն : Ոչ է հարկ ասել Չերուսի իմաս-
« տութեան՝ զի առաջինքն գորացեալք քեարկու-
« րեամբ հռովմեականին Աթոռոյ՝ յաղթեցին ի վերջէ
« հակառակորդաց իւրեանց. եւ եթէ ընկճեցին ոչ
« զոգւոցն աշխոյժս, սակայն զքերանս նոցա կար-
« կեալ լռեցուցին : Միանգամայն եւ պարտ ան-
« ճանց վարկուցեալ զգլխաւորս յոսոխացն նկուն
« առնել, զՄխիթարեան միաբանսն ասեմ, զորս եւ
« բամբասէին կասկածելիս գոյ ի հաւատոյս՝ իբրու-
« հայկականացն աւանդից տարապայման ջատա-
« գովս, որոյ վասն եւ ոչ ըստ բաւականին կարոյիկս
« եւ պապականս, ի կործանումն եւ ի ցրումն նոցա
« վաստակեցին : Նմին իրի եւ Պապն Հռովմայ
« պահանջեաց ի Մխիթարեանց ազգ իմն նորոյ
« դաւանութեան եւ յայտարարութեան հաւատարիմ
« հպատակութեան իւրեանց առ ամենայն հրամանս
« եւ ակնարկութիւնս Աթոռոյն Հռովմայ եւ պաշտօ-
« նեից ի նմանէ կարգելոց, եւս եւ ի խնդիրս որ
« արտաքոյ էին մասանց հաւատոյ : Երկուցեալ
« այժմոս առաջնորդին Մխիթարեանց, Տեառն Գեոր-
« գայ աբբայի Հիւրմիւզեան, ի սպառնալեաց ոսո-

« խացն, յանձին կալաւ առնել զյայտարարութիւնն
« զայն անարժան, եւ զբազումս յիւրոցն միաբանից
« բռնադատեաց ձեռնագրել ի նոյն. որով եւ Մխիթարեանն
« միաբանութիւն իրաւամբ համարեցաւ իմն
« մատնտու իրաւանց ազգիս եւ միանգամայն նա-
« ՚ խատիջ ուղղափառութեան վարդապետութեան
« Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ : Քանզի ասեր
« Հիւրմիւզեանն ի միաբանական գրին իւրում որ
« առ Պապն, երբ Հայքն ջմիաբանեայք ընդ Հռով-
« մեականին Եկեղեցւոյ՝ հերձուածողք են եւ հերե-
« տիկոսք, որով եւ արտաքոյ գտանին կաթողիկէ
« Եկեղեցւոյն Քրիստոսի : Եւ զայս վկայութիւն
« Մխիթարեանց հրատարակեաց Պապն Պիոս Թ
« ի կոնդակին իւրում տուելոյ յամին 1854, յ2 անուր
« փետրուարի :

« Այնմ անիրաւ եւ անպատեհ յայտարարութեան
« ոչ եղաք ձեռս երեքին վարդապետքս որ զտեսչու-
« քիւն Մուրատեան վարժարանին ունեաք յայնժամ
« ի Փարիզ, եւ յերկուց եւ յերից ամաց հետե հակա-
« ուակեաք օրինաւոր բողոքով խորհրդոց եւ գնացից
« առաջնորդին Մխիթարեանց եւ համախոհից նորա.
« որով եւ ատելիք եղաք յաջս նոցին, եւ կասկածելիք
« առաջի հռովմեական Աթոռոյն : — Դարձեալ եւ
« այնմ անարդար հրամանին ընդդէմ կքրեցաք որով
« նոյն առաջնորդ՝ դրդեալ ի Հռովմայ պաշտօնեիցն՝

« կամեր նախ գվարժարանն գայն ի Հռովմ փոխա-
« դրել, եւ ապա գեթ գայն պահանջեր զի գկաթոյի-
« կաց եւեթ մանկունս ընդունիցիմք ի վարժարանն
« յայն ազգային յաշակերտութիւն, կամ թե գՀայոց
« մանկտին եւս ընկալեալ՝ ի կաթոյիկութիւն գնոսա
« շրջեսցուք, որ ընդդեմ էր խղճի մերում, եւ նորին
« իսկ բարերար հիմնադրին՝ այս ինքն է Աղա Սա-
« մուելի բանիցն եւ դիտաւորութեան հակառակ :

« Յաղագս այսր ամենայնի մի ոմն ի մենջ, Գա-
« բրիել Վարդապետ Այվազովսի, անդէն իսկ ի վերջ
« կոյս 1854 ամին ի բաց հանաւ ի Մուրատեան վարժա-
« րանէն, յետ եօթնամեայ տաժանական վաստակոցն
« ի դաստիարակութիւն հայկազն մանկտւոյն, իբրեւ
« կասկածելի ի վարդապետութիւնս իւր եւ ի հայու-
« թիւն հակամետ : Ապա յետ վեցից ամսոց ինքն իսկ
« առաջնորդն Մխիթարեանց եկեալ ի Վենետկոյ ի Փա-
« րիզ, եհան մերժեաց ի վարժարանէ անտի բուռն գօ-
« րութեամբ եւ անհնարին գայթակղութեամբ ազգայ-
« նոց եւ օտարաց գՍարգիս Վարդապետ Թեոդորեան
« գՎերատեսուչ վարժարանին, որ ի յիսնից ամաց
« հետէ միաբան վանիցն էր, եւ զամս քառասուն
« վաստակեալ ի կանգնումն եւ ի տեսչութիւն ազ-
« գայնոյ վարժարանին, եւ յեօթանց ամաց հետէ
« արժուակալ իսկ առաջնորդին Մխիթարեանց. ընդ
« նմին եւ գԱմբրոսիոս Վարդապետ Գայճայեան

« զդասատու եւ գուսումնապետ վարժարանին :
« եւ իբրեւ տեսար երեքին վարդապետքս եթե
« այսպէս ոտնակոխ եղեն յառաջնորդէն Մխիթա-
« րեանց իրաւունք ազգի եւ ամենայն արդարութիւն,
« կամաւորապէս հրաժարեալ ի բաց էլաք ի միաբա-
« նութենէ անտի նոցա, յազգս Հայոց եւ յառաջնորդս
« նորին առնելով ապաստան՝ հոգ յանձին ունել եւ
« կորզել ի ձեռաց Մխիթարեանց գէթ զմասն հրիտա-
« կին սահմանելոյ ի դաստիարակութիւն աղքատ եւ
« որք մանկտուոյ Հայկազնեայցս առ հասարակ : Այս
« անցք անցին ընդ մեզ ի հերուն, այս ինքն է ի Մայիսի
« 1855 ամին, եւ մեր անորտունջ տարաք ամենայնի
« Տեառն շնորհիւ առ սէր ճշմարտութեան եւ արդա-
« րութեան եւ ազգիս մերոյ : Այլ քանզի ընդ մեզ էլին
« ի վարժարանէ անտի եւ քսանիւ ջափ աշակերտք
« ի յիսնիցն, եւ յոյովք ի նոցանէ յանձն եղեն դար-
« ձեալ ի ծնողացն իւրեանց ի խնամս մեր եւ օր քան
« զօր անէն ի բազմութիւն, ոչ դադարեն Մխիթա-
« րեանք ի խուելոյ զմեզ եւ ի գրպարտելոյ առաջի
« մեծի եւ փոքու՝ միաբանեալք ընդ հռովմեակա-
« նացն պաշտօնեից կամակատարս : Սակայն եւ
« ի հակառակէն՝ ողջամիտ մասն ազգիս Հայոց
« ականատես գոյով եւ ականջալուր առ ի մենջ կրե-
« լոցն վշտաց եւ նեղութեանց ի սէր եւ ի պաշտպա-
« նութիւն իրաւանց իւրոց, քաջալերէ զմեզ եւ խրա-

« խոսես բանիւք եւ արդեամբք՝ հաստատուն կայ
« ի խորհուրդս մեր, եւ մի անձանցս դիւրի միտ դնե-
« յով ձեռնբափ լինել յազգասիրութեան վաստակոց
« եւ ջանից. խրախոյս արդարեւ քաղցր յոյժ եւ պա-
« տուական յաջս լքելոցս եւ տառապելոցս՝ յետ
« աստուածատուրն պարգեաց անդորրութեան խղճի
« եւ ոգւոյ :

« Իսկ յանորս յայտոսիկ կամեցեալ մեծամեծացն եւ
« իշխանանորաց Հայոց որ ի Կոստանդնուպօլիս՝
« օգտակարագոյն եւս գործել զվաստակս մեր դուզնա-
« քեայս ազգին եւ հայրենեաց, առաջի արարին մեզ
« խորհուրդ կարենոր՝ ի մեզ յանձն առնելոյ աներկ-
« միտ վատահութեամբ զդատիարակութիւն եւ
« զխնամս հոգեւոր եւ մարմնաւոր հրահանգաց որ-
« դոցն իւրեանց, եթէ ի բաց կացեալ բոլորովին յիշ-
« խանութենէ Պապին եւ առաջնորդաց առ ի նմանէ
« կարգելոց, անդրէն ընդ հովուապետական իշխա-
« նութեամբ Ձերոյ Սրբութեանդ մտանիցեմք, հպատա-
« կելով ի հոգեւորականսն հրամանաց Սրբազան
« Պատրիարքին Հայոց որ ի Կոստանդնուպօլիս : Եւ
« մեր որ անդատին ի մանկութենէ նուիրեալս եմք
« ի սպաս պաշտաման Տեառն եւ ի նպաստ բարգաւա-
« ճանաց հայկազեանս գրոհի, ոչ ինչ դանդաղեցար
« յանձին ունել զառաջարկն, եւ գրեցար առանիկ առ
« նա ինքն Սրբազան Պատրիարքն միաբանական գիր

« հպատակութեան, գորոյ զպատճենն գոցե Սրբութիւնդ

« Ձեր յարակից սմին :

« Միանգամայն պարտ է պատշաճ համարեցար
« էւ առ Ձերդ գերագահ Սրբութիւն յայտ առնել սո-
« վիմբ զպատրաստականն մեր յօժարամտութիւն
« մտանելոյ ընդ եկեղեցական իրաւասութեամբ մեծի
« Աթոռակալիդ էւ յաջորդի սրբոյ Հօրն մերոյ Գրի-
« գորի Լուսաւորչին, որոյ բարեխօսութեամբն է
« Ձերովդ հայրապետական հաճութեամբ էւ օրհնու-
« քեամբ ակն ունիմբ պտղաբերս լինել ջանիցս մերոց
« յօգուտ է ի պայծառութիւն Ազգիս :

« Պարտս անհրաժեշտս գրեալ էմք անձանց՝ պաշտ-
« պանս լինել մերովսանն, էւս առաւել յայսմ հետե,
« էւ համարձակաձայն ջատագովս ուղղափառ վար-
« դապետութեան սրբոյ առաքելական եկեղեցւոյս
« Հայաստանեայց գրով էւ բանիւ էւ արդեամբք, էւ
« զմնացուած կենաց մերոց ի սոյն նուիրել այսու-
« հետե կամակար յօժարութեամբ : Եթե հաճոյական
« իցե սրտագիտին Աստուծոյ մերս այս անձնանուեր
« նահատակութիւն, նա ինքն զօրացուցե անշուշտ
« զտկարութիւնս մեր էւ քաջալերեցե զմեզ ի սիրտ
« էւ ի հոգի : Եւ այսմ քաջալերութեան ակնկալեալ
« սպասեմք յօրհնութիւնաբեր պատասխանոյ Սրբա-
« զան Տերութեանդ :

« Սովին աներկբայ յուսով խոնարհեալք վերստին

« Ի համբոյր սատուածարեայ աջոյ Վեհապետիդ, ողջ
« լինել ըղձանամք յամայր ամօք բարեկենդանու-
« քեան,

« Աստուածապատիւ Սրբազան Տէր,

« Զերումդ Վեհափառութեան

« Ամենախոնարհ ծառայք եւ որդիք

ՍՍ.ՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԹԷՈԴՈՐԵԱՆ

ԳԱՐԻԷԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՅՎԱԶՈՎՍԳԻ

ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼՖԱՅԵԱՆ

Ի Փարիզ, 18 Մայիսի 1856:»

Այն միջոցին Կոստանդնուպօլսոյ սրբազան Պա-
տրիարքը հետագայ նամակը գրեց մեզի, հետն ալ
օրհնութիւնաբեր պատուական վկայագիրն յուղարկեց,
որոց օրինակները ահա կը դնենք հոս: Յուսանք թե
յետ սակաւուց կը նդունինք նաեւ սրբազան Կաթու-
ղիկոսին օրհնութեան Կոնդակը, եւ եթէ հարկ հա-
մարուի՝ զայն ալ կը հրատարակենք:

« Արժանապատիւ Հոգեհարազատ Սիրելեացդ մերոց
խնդայ:

« Զմիաբանական թուղթ յայտարարութեանն ստու-
« րագրեայ յերեցունց Արժանապատիւ Վարդապե-

« տացդ՝ ընկալար ամենայն հոգեւոր բերկրանօք եւ
« հաճութեամբ սրտի միանգամայն, տեսանելով
« զանկեղծ եւ գլօժարակամ փոյթ ձեր պատասպարելոյ
« ի խնամս մեր հայրական հոգեւոր հովուութեան, եւ
« բոլորանուէր հպատակութեամբ ընծայելոյ զանձինս
« յորդեգրութիւն ծնողին զձեզ հարագատի՝ Հայաս-
« տանեայց սուրբ Եկեղեցւոյ :

« Վստահ եմ ի Տէր, զի ամենայն ջան եւ բարի
« վաստակ ի ճշմարտասէր սրտիցդ նուիրեալ յօգուտ
« եւ ի բարգաւաճութիւն Ազգիս եւ ի պաշտպանու-
« թիւն հայրենի ուղղափառ սուրբ Եկեղեցւոյս մերոյ
« պսակեցի՛ անշուշտ երկնային եւ երկրաւոր պար-
« գեւօք, եւ այն լինիցի ձեզ ի փառս եւ ի մշտնջե-
« նաւոր վայելս գովութեան :

« Եւ արդ համառօտութեամբս այսու յայտ առնեմ
« ձերոց Արժանապատուութեանց, զի զուղղեալն ձեր
« զիր հպատակութեան առ Վեհափառ Հայրապետ
« ամենայն Հայոց Արքազան Կաթողիկոսն Էջմիածնի,
« յղեցար մերով յանձնարարական գրով՝ շնորհել
« ձեզ զՀովուապետական բարձր օրհնածիր Կոնդակն.
« իսկ առ ի հաստատ առնելոյ զապահովութիւն
« սրտից ձերոց փութացար առ այժմ տալ զերիս
« վաւերական կնքունակ վկայագիրս մեր ի ձեռս
« իւրաքանչիւրոցդ. յորոց զմին ընկալաւ աստ Ար-
« ժանապատիւ Երիցակից ձեր Ամբրոսիոս բարե-

« շնորհ վարդապետ, եւ գերկուսան առաքեցաք այդր
« առ մեծաշուք Յակոբ Էֆենտի Կրճիկեան, որ ունի
« տայ մատուցանել ձեզ գայնոսիկ :

« Ողջունիւ արժանի մեծարանաց եւ սիրոյ մնամ

« Ձերդ Գերապատուելեաց

« Բերանալիք օրհնաբան եւ բարեմադրու միշտ

Պ. Կ. ՅԱԿՈԲ

Արքեպիսկոպոս :

« 10 յունիս 1836, ի Պատրիարքարանս Հայոց
« Կոստանդնուպօլսոյ : »

(Առ Գերյարգոյ Ծերունագարդ Տ. Սարգիս Վարդապետ
Թեոդորեան եւ Տ. Գաբրիել Արժանապատիւ Մեծիմաստ Վար-
դապետ Այվազովսքի ի Փարիզ :)

« ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ Ծառայ Տեր Յակոբ Արքե-
« պիսկոպոս եւ ՊԱՏՐԻԱՐԷ Հայոց Կոստանդնու-
« պօլսոյ յայտ առնեմ, զի սա ինքն Արժանապատիւ
« Սարգիս Վարդապետ Թեոդորեան¹ հրաժարեալ
« ի հպատակութենէ Պապին Հռովմայ եւ ի միաբա-

¹ Միւս երկու վկայագրաց մեջ անունները միայն փոխուած են, ինչպէս որ յայտնի է :

« նութենէ Միսիթարեան ուխտին, ազատ կամօք եւ
« անճնանուէր հպատակութեամբ ընկալաւ զհոգեւոր
« իշխանութիւն իրաւասութեան Աստուածարեայ Հայ-
« րապետի ամենայն Հայոց Սրբազան ԿԱԹՈՂՈՒԿՈՒ-
« ՍԻՆ սրբոյ Էջմիածնի . եւ եւս յօժարամիտ մատու-
« ցեայ առ մեզ զգիր հպատակութեան եւ կալոյ ընդ
« հայրական խնամօք մերովք եւ յաջորդաց մերոց
« առ ի ծառայել հաւատարմութեամբ Լուսաւորչա-
« կան Եկեղեցւոյս, ընկալաք զնա իբրեւ որդի հա-
« րազատ եւ ուղղադաւան Վարդապետ Հայաստա-
« նեայց սուրբ Եկեղեցւոյ, եւ տուաք հրաման եւ ազա-
« տութիւն մերով հոգեւոր իշխանութեամբ ըստ քա-
« հանայական սուրբ կոչմանն իւրում զոր ընկալեայ
« ունի արդէն վաւերական ձեռնադրութեամբ, վար-
« դապետել եւ կատարել զամենայն աստուածային
« պաշտամունս ըստ արարողութեան եւ ծիսի մերս
« սուրբ Եկեղեցւոյ յԱրեւելեան վարժարանին Լու-
« սաւորչական Հայոց որ ի Փարիզ, եւ ամենայն
« ուրեք : Յանճն արարեայ զնա ի շնորհս սուրբ
« Հոգւոյն մաղթեմք զի ամենայն հաւատարմութեամբ
« անխոտոր ընթացեայ ի շաւիղս ճշմարտութեան՝
« օրինակ բարեաց զանճն ընծայեցուսցէ ի շինութիւն
« հաւատացելոց եւ ի պայծառութիւն Հայաստանեայց
« սուրբ Եկեղեցւոյ :

« Տուեայ եղեւ օրհնութեամբ վկայագիրս այս ստո-

« րագրութեամբ եւ կնքով մերով յամի 1856, յունիս 1,
« ի Պատրիարքարանի Հայոց Կոստանդնուպօլսոյ :

Պ. Կ. ՅԱԿՈԲ Արքեպիսկոպոս : »

ԺԲ.

Ահա այսպիսի եւ այսքան հայրագութ սիրով եւ
օրհնութեամբ ընդունեցաւ զմեզ Կոստանդնուպօլսոյ
Ամենապատիւ Պատրիարքը՝ ազգային հոգեւորական
ժողովովը հանդերձ : Վասն զի հասկըցաւ սրտերնուս
ուղղութիւնը եւ գործերնուս կանոնաւորութիւնը, եւ
հաստատեց զմեզ այն աներկմիտ վստահութեան մեջ
գոր պարտք կրճանջնայինք ունենալ այնպիսի բա-
րեսէր եւ արդարասէր վեհանձն Առաջնորդի եւ իր
խոհական եւ ազգասէր խորհրդականացը վրայ :

Իսկ թէ մեր բարեպաշտ ու եռանդուն ազգը որ ի
Կոստանդնուպօլիս եւ ուրիշ տեղուանք՝ ինչ աստի-
ճանի սիրով եւ սրջափ մեծարանօք ընդունելութիւն
ըրաւ այս օրերս Ամբրոսիոս վարդապետին, — որով
եւ միւս երկոցունցս, — աւելի դիւրին է մեզի սըր-
տիւ զգալ եւ խնդութեան արտասուօք փառք տալ
Աստուծոյ, եւ սրտանց շնորհակալութիւն շնորհակա-
լութեան վրայ մատուցանել Ազգին, քան թէ բերնով
կամ գրով բացատրել : Եթէ մեր այնչափ անհամար

պատուական բարերարաց համեստութիւնը արգելք
չդնէր մեզի, հիմակուրնէ անոնց գէթ գլխաւորներուն
անմոռանալի անունները կուգէինք հրատարակել,
եւ ամենայն ազգասէր սրտերը հրաւիրել որ մեզի հետ
գովեն եւ օրհնեն զանոնք. յուսանք թէ այն առիթն
այլ քիչ ժամանակէն կունենանք, ու մեր երախտագի-
տութեան պարտքը կերպով մը կըկատարենք: Չայս
միայն յիշեցընենք անոնց որ ականատես կամ ական-
ջալուր եղան այն ցնծումներուն ու մեծաշուք հանդես-
ներուն՝ թէ ո՛չ ապաքէն իրաւցընէ հոգեւորական յաղ-
թանակ մըն էր եղածը ի պարծանս եւ ի մխիթարու-
թիւն Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ, որ իր երէք
անճնանուէր սպասաւորներուն վերադառնալը տեսաւ
ի գերութենէ օտարաց, եւ անոնց իր գիրկը պատսպա-
րուիլը՝ հանդերձ անյեղլի դիտաւորութեամբ որ իր
անմիջական ծառայութեանը մէջ անցընեն իրենց մնա-
ցեալ կեանքը:

Քսն լիցի մեզի մտքերնիս դնել որ իբր թէ ազգերնիս
կարօտ էր մեր ո՛ր եւ իցէ սպասահարկութեանը.
Վասն զի ինչ պիտի ըլլայ երէք հոգւոյ աշխատութիւնը
յօգուտ ամբողջ ու բազմաթիւ ազգի մը, երէք հոգւոյ՝
որ իրենց կարողութեան չափաւորութիւնը լաւ ճանչ-
նալէն ի գատ՝ մահկանացու եւ վաղանցիկ ըլլալնին
ոչ երբէք կրնան մոռնալ: Բայց զայս յայտնաբար-
բառ կըբարոզենք թէ մենք մեծապէս կարօտ էինք եւ

ենք Ազգիս մեծ մասին կարեկցութեանը, համակրութեանը, ներողամտութեանը, սիրոյն եւ վստահութեանը. ուստի եւ անպատմելի է այն մխիթարութիւնն որ կըզգանք սրտերնուս մեջ՝ քանի որ այս կարօտութիւնը լցուելու վրայ կըտեսնենք. մանաւանդ զի անով իրաւունք մը կունենանք յուսայու որ այսուհետեւ ալ եթէ Աստուծոյ շնորհիւր եւ ազգիս ձեռնտութեամբը փոքրիկ ծառայութիւն մըն ալ ընենք իրեն, մեծի տեղ պիտի անցնի :

ԺԳ.

Յուսանք թէ մինչեւ հիմա ըսուածներէն բարեւեր եւ անկողմնասեր ընթերցողները հասկըցան ըստ բառականին մեր ըրած գործողութեան պատճառները, ու սրտերնին հանգչեցաւ : Եւ սակայն ճրջափ որ գործողութիւն մը մեծ երեւնայ, այնչափ ալ պատճառներուն ոյժը յստակ կերպով հասկընալը դժուար կըլլայ. անոր համար տարակոյս չկայ թէ դարձեալ պիտի ունենանք ամեն կարգի եւ ամեն աստիճանի մարդկանց մեջ ալ մեր գործողութիւնը պարսաւողներ ու մեղադրողներ : Որք մեր գործողութիւնը պիտի բամբասէ՝ չարաչար դատելով զբարին. որք դիտարութիւննիս վար պիտի զարնէ՝ իր անձնական մտածմունքներէն չափելով. որք խորագիտութիւն պիտի

համարի խօսքերնուս ջհաւատալը . որը ինքնիրեն պարտք մը պիտի սեպէ մեր ամեն մէկ խօսքին ու քայլափոխին մէջ անհաստատութեան շուք մը փնտրուելը . որը պիտի ըսէ թէ լոկ բռնական տեղափոխութիւն մըն է ըրածնիս' եւ ոչ թէ կամաւորական է . խորհրդածեալ գործողութիւն . որն ալ թէ գաղտնորոգայթ հնարք մըն է բանեցուցածնիս , եւ ոչ անկեղծ է . անխարդախ ազգասիրութիւն . ո՞ր մէկն ըսեմ . շահասիրութիւն , փառասիրութիւն , անձնասիրութիւն , ասոնք ամենն ալ վրանիս յարմարցընելէն ետեւ , մէկ խօսքով այս պիտի ըսեն շատը թէ խաբեական ձեւացմունք է ըրածնիս է . ոչ թէ սրտանց է . հաստատուն բաժանումն ի հռովմեականաց առ հասարակ :

Այսպիսի խօսքերու , կարծիքներու , կասկածներու դեմ մէկիկ մէկիկ պատասխան տալը մեծ անպատուութիւն կը համարինք ' ոչ միայն մեզի , այլ մանաւանդ մեր պատուական Ազգին այն մեծ ու լուսաւորեալ մասին ' որ հանդերձ եկեղեցական ու աշխարհական բազմաթիւ մեծամեծներովը այնպիսի սիրայիր է . անակնկալ ընդունելութիւն ըրաւ մեզի : Բայց արժան կը համարինք քանի մը ընդհանուր պատասխաններ ալ անոր համար միայն դնել հոս որ մեր բարեկամները էթե ուզեն պաշտպանել զմեզ մեր պարսաւողներուն մեղադրութեանցը դեմ , ամենեւին դժուարութիւն մը չկրեն :

Եւ նախ զայս կըսենք . որպէս զի կարծեինք մենք թէ այսպիսի գործողութիւն մը ընելէն ետեւ՝ *ամենայն մարդկանցմէ ալ* գովեստի պիտի սպասենք , ոչ միայն յիմար պիտի ըլլայինք , այլ եւ որ մեծն է՝ Քրիստոսի Տեառն մերոյ սպառնացած սոսկալի վային պիտի սպասեինք . « Վնայ ձեզ յորժամ բարի ասիցեն զձեզ *ամենայն մարդիկ*¹ : » Ոչ . Քրիստոսի ճամբան բռնել ուզող անճնուրաց մարդը , ճշմարտութեան համար կեանքը դնող մարդը , չկրնար ուզել որ ամեն մարդու ալ հաճոյ ըլլայ : Ահա ինքն իսկ Երանելին Պօղոս , որ *ընդ ամենայնի ամենայն եղև* զի զամենեսեան շահեսցի ի Քրիստոս , կըվկայէ յայտնապէս ու կըսէ . « Եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէի , ապա Քրիստոսի ծառայ ոչ էի² : » Հապա ո՞ր թողունք այն կտորն ալ որ սզգերնուս դժբաղդութենէն՝ իր մեջ գտնուած բաժանմունքներն ու կուսակցութիւնները այնչափ շատ ու տեսակ տեսակ են որ անոնցմէ մեկուն կամ մեկային կամ երկուքին ու երեքին միանգամայն հաճոյ եղող մարդն ալ հարկ է որ միւս կուսակցութիւններուն անհաճոյ ըլլայ : Այս մասնաւոր պարագան էր որ ստիպեց զմեզ կարգէ դուրս զգուշանորութեամբ մը շարժելու , եւ մեր որոշմունքը գաղտնութեան մը մեջ պահելու առջի

¹ Ղուկ 2, 26 .

² Փաղատ . Ա, 10 :

բերան նաեւ քանի մը բարեսէր անձիւններէ՝ մինչեւ
որ վերոգրեալ պատրիարքական վկայագրովը հաս-
տատուեցաւ վիճակնիս : Ուստի զարմանք ալ չէր որ
Քաբրիէլ վարդապետը՝ մինչդեռ տակաւին չէր մտած
ընդ հովանաւորութեամբ սրբազան Պատրիարքին
Կոստանդնուպօլսոյ՝ Փարիզու մեջ Լատինացւոց եկե-
ղեցին կերթար պատարագ մատուցանելու կիրակի
եւ տօն օրերը որպէս յառաջ . իսկ երբոր հեռագրա-
կան նամակով իմացաւ վկայագրին ելլելը՝ մեկէն դա-
դրեցաւ օտար եկեղեցի երթալէն ու խառն ծեսով պա-
տարագելէն :

Այսչափ ճշդութեամբ հասկըցեր ենք ահա որ այս-
պիսի գործողութեան մը *ամենուն* հաճոյանալը կարելի
բան չէ, մանաւանդ մեր ազգին մեջ : Եւ սակայն մեծ
մխիթարութիւն է մեզի որ զմեզ գովողներն են առ
հասարակ աննախանձ եւ ազգասէր եղբարք մեր . իսկ
պարսաւորողներն *ընդհանրապէս* օտարք կամ օտարա-
ցեալք եւ օտարացուցիչք ազգին . գովողներն ու մե-
ծարողներն անոնք՝ որ գուցէ ոչ միայն երեւելի ծա-
ռայութիւն մըն ալ չեն տեսեր մեզմէ, այլ եւ ատեն
ատեն իրենց հակառակորդ կարծեր են . իսկ պար-
սաւորողներն անոնք միայն՝ որ տարիներով ու շատ
տարիներով մեր հաւատարիմ ծառայութիւնը վայելեր
են զանազան եղանակաւ, եւ եթէ ներելի է յիշեցընելը՝
բերեալ ըստ իմիք իմիք նաեւ պարծենցեր են մեզմով...

խորհոյ ի մտոյ զիք զմեզիզատսխոստատան զյւրեմիս
բայոյ մածոյի զմեմա թա մջ **ԺԴ.** Ան զգձմրուստայոյս բմեր

Սակայն չըլլայ թէ այսպիսի ընդհանուր խօսքերով
փախուստ տուածի պէս մը երեւնանք մեր պարսաւող-
ներուն առջեւը : Հետերնիս կառնունք ուրեմն մեր
ազգասեր բարեկամներն ու կըհարցընենք մեր հակա-
ռակորդներուն, — անոնց մեջ ալ այն մասին միայն
որ միտքը դրած է թէ ազատ է ինքը ամեն տեսակ
կուսակցութեան հոգիէ, հնացեալ ատելութենէ, կոյր
նախանձայութեան, տգիտական նախապաշար-
մունքէ ու որ է. իցէ պղտորիչ կիրքերէ . — ինչ ունին
արդէօք ըսելիք այս մեր բռնած ճամբուն դեմ՝ վերոյի-
շեալ պատճառները լսելէն ու հասկընալէն ետեւ : —
Թերեւս մեկ բան մը միայն՝ որ շատին աչքին առ-
ջեւը գօրաւոր ճշմարտութիւնն ու անհակառակելի
վճիռ կըկարծուի . այսինքն թէ « Հաւատափոխու-
թիւնը գեշ բան է : » — Իրաւցընէ գեղեցիկ է ճշմա-
րիտ վճիռ . բայց Էրբ ճշմարիտ . Էրբ որ մեկը *ուղիղ*
հաւատքը թողու է *մոլար* հաւատք մը ընդունի :
Ըսել է թէ այդ ըսողը միտքը դրած է թէ Հայոց
հաւատքը *մոլար* է է. Հռովմայեցւոցը միայն *ուղիղ*,
է. մենք ուղիղը մոլարին հետ փոխեր ենք : Եւ որով-
հետեւ այս խօսքին հիմը սխալ է, այն վճիռն ալ մեզի
ամենեւին ջլարմարիք :

Դարձեալ, Հաւատափոխութիւնը գեշ բան է ըսելով
զմեզ պարսաւողները մէյ մըն ալ անոնք կրնան ըլլալ
որ իրենց աչքին առջեւը ամեն հաւատք նոյն է,
ամեն հաւատք ալ աղէկ է. բայց փոխանակ հետեւ-
ցընելու այս իրենց կարծիքէն թէ ուրեմն մէկ *աղէկ*
հաւատք մը ձգելն ու ուրիշ *աղէկ* հաւատք մը առ-
նույր վնաս չունի, կը պնդեն թէ հաւատք փոխելը
գեշ բան է. որով կասկած կուտան իրաւամբ՝ թէ
իրենք կամ անտարբերեալ են բոլորովին, եւ կամ՝
որ գրեթէ նոյն է՝ ամենեւին հաւատք մը չունին :
Ապա ուրեմն այդ վճիռը անոնց բերնէն ալ էլած
ատենը ոյժ չունի մեր խնդրոյն դէմ :

Բայց թերեւս գտնուին նաեւ այնպիսի բարեմիտ
անձինք որ ըսեն թէ հաւատափոխութիւն չէ *տէ* ինչ
է ըրածնիդ որ *կաթուղիկուծիւնը* թողուցիք ու *հայ*
էդար : Այս ըսողին հետ ջենք ուզեր ամեն անգամ,
եւ մանաւանդ այս պարագայիս մէջ, սովորական
դարձած ճշմարտութիւնը կրկնել՝ թէ *կաթուղիկուծիւնը*
հաւատք է, իսկ *հայուծիւնը* ազգ էւ ազգութիւն.
հապա ուամկական գրուցուածքը ըստ ուամկաց առ-
նելով՝ կը հարցընենք. Կաթուղիկութիւնն ու հայութիւնը
ինչո՞վ կը տարբերին իրարմէ : Եթէ պատասխան տայ
(ինչպէս որ պարտական է պատասխանելու) թէ
գլխաւորապէս ասով կը տարբերին իրարմէ Հայն ու
Կաթուղիկն որ Հայը իր Կաթուղիկուսը միայն կը ճանչ-

նայ իր եկեղեցւոյն գլուխ, եւ անոր միայն կրնա-
գանդի, իսկ Կաթողիկը Հռովմայ Պապը կրդասանի
գլուխ ամենայն եկեղեցեաց, եւ անոր հրամաններուն
կրհպատակի, — Այս պատասխանս կուտանք իրեն .
Որովհետեւ մեր հարքն ու նախահարքը Հայ էին նաեւ
ըստ այսմ մասին, ու վերջին ժամանակները *կաթողիկ*
եղեր են, ո՞չ ապաքեն էրէ *հաւատաւորութիւն* մը կայ
եղած՝ անոնք են ընողները, իսկ մենք վերադառնա-
լով ի դասանութիւն նախնեաց մերոց՝ անոնցմէ ոմանց
ըրած փոփոխութիւնը շտկած կըլլանք : Սակայն այս
բացատրութիւններէն ետքն ալ էրէ մեր ըրածը իբրէ *հա-*
ւատաւորութիւն պախարակուի, վեճը համառօտելու
մտքով կրհաստատենք թէ մեր մտաց համոզումը նոյն
էր ի սկզբանէ հետէ՝ ինչ որ է նաեւ հիմա . այսինքն թէ

Նախ՝ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ վարդա-
պետութիւնը ուղղափառական է՝ համաձայն ըլլա-
լով վարդապետութեան միայնոյ սուրբ կաթողիկէ
եւ առաքելական եկեղեցւոյն Քրիստոսի, որ ոչ թէ
Հռովմայ եկեղեցին է *միայն*, այլ եւ ամենայն եկե-
ղեցիք ուղղափառաց : Ուստի եւ

Երկրորդ, Հայոց ազգը ոչ *հերեալիս* կրնայ
ըսուիլ եւ ոչ *հերձուածող*, այլ որդի էւ անդամ է կա-
թողիկէ կամ ընդհանրական եկեղեցւոյն Քրիստոսի :
Ուստի եւ

Երրորդ, Անիրաւ պահանջմունք է Հռովմայ Պա-

պերուն ըրածը՝ որով կուգեն որ ամենայն եկեղեցիք
քրիստոնէից (ընդ որս եւ Հայք) գիրենք ճանչնան
մի միայն երեւելի գլուխ ընդհանրական եկեղեցւոյն
Քրիստոսի. եւ այն ոչ միայն դասական կարգաւ մը
իբրեւ *առաջին ի մէջ հաւասարից*, այսինքն կաթողի-
կոսաց եւ պատրիարքաց, այլ եւ իբրեւ գլուխ նոցա
եւ հրամանատար, եւս եւ ձեռնադրող եւ կամ գեթ
իրենց տրուած իշխանութեանը մէջ հաստատող : Եւ
որովհետեւ Հայաստանեայց եկեղեցին ոչ երբէք ճանչ-
ցեր է Պապերուն այսպիսի իշխանութիւն ունենալը
իր վրայ, այսուհետեւ այ պարտական չէ ճանչ-
նալու :

ԺԵ.

Կրնայ մեկը հարցընել մեզի, եւ իրաւամբ, թէ ինչո՞ւ
համար մինչեւ հիմա յայտնապէս եւ հրապարակաւ
չէիք քարոզեր այդ ձեր մտաց համոզմունքը, մա-
նաւանդ թէ երբեմն ատոր հակառակն այ քարոզելու
պէս կերեւնայիք : Պատասխաննիս յայտնի է : Վասն
զի անդամ գտնուեր էինք այնպիսի կրօնաւորական
Միաբանութեան մը որ թեպէտ սոյնպիսի ազգասիրա-
կան եւ ուղիղ սկզբունքներ ունէր, բայց որովհետեւ
հռովմեական կաթոլիկ ճանչցուած էր ամենեւնի, եւ
միշտ կուգէր նոյնպէս ճանչցուիլ, կարծես թէ հար-

կաղրուած էր իր սկզբունքը պարտըկելու՝ որպէս զի իր ոսոխներէն չհալածուի ու չբամբասուի . անոր համար չէինք կրնար ուզել որ ըսուի *առանց ստիպողական պատճառի* թէ մենք՝ քանի մը հոգի՝ պատճառ կըլլանք բովանդակ Միաբանութեան գլխացաւոր թիւն ու հալածանք կրելուն :

Կըվկայեր խիղճերնիս թէ այն Միաբանութեան իր ուղիղ սկզբունքը այլ է . այլ նկատմունքներով պարտըկելը՝ անվայել բան, ու բռնածը անել ճամբայ էր , է . մեր ազգին այ օգուտ ընելու տեղը վնաս կըներ . բայց մէկ կողմանէ նոյն Միաբանութեան հանգստութիւնը կամ շահը (յայտնի է թէ չափազանց կողմնասիրութեամբ) աւելի վեր կըղնէինք քան թէ ազգային օգուտը . է . մէկայ կողմանէ յոյս այ ջուներնայով որ երկու երէք կամ ջորս հոգւոյ արիութիւնը բաւական ըլլայ ամբողջ Միաբանութեան ընթացքը փոխել տալու , կըլուէինք համբերութեամբ : Օրինաւոր նաւապետով ու խորհրդականներով կառավարուած նաւըն էր Միաբանութիւնը . մէկ երկու նաւավարաց՝ էւս է . խորհրդականաց՝ պարտքը ինչ կրնար ըլլայ , էթէ ոչ իրենց տրուած հրամանները ճշդութեամբ կատարել , գէթ քանի որ յայտնի ու ակներե . վտանգ չկար նաւակոծութեան :

Բանը շատ փոխուեցաւ՝ էրբոր անցեայ տարուան դիպուածներովը ստիպուեցանք Միաբանութեան միաբա-

նութենէն բոլորովին բաժնուելու. վասն զի այնուհետեւ պատճառ չէր մնար մեր ուղիղ ճանաչմունքը պարտըկելու, եւ օտարագրի առաջնորդաց կորօրէն հնազանդելով՝ ազգերնէս հեռու պտըտելու :

ԺԶ.

Հասկըցուեցաւ ուրեմն թէ այս մեր վերադարձին ջհանողներուն մեղադրութիւնները այնպիսի ծանր բաներ չեն որ բաւական ըլլային գմեղ անկեց ետ ձգելու, խաւիանելու : Ուստի չէինք կրնար մտիկ ընել նաեւ այն բարեմտաց կամ թէ երկջոտաց խօսքերուն որ կուգէին կերպով մը աչքերնիս վախցընել՝ ըսելով թէ « Գուցէ *զայթակղութեան* պատճառ կըլլար տգիտաց » : Վասն զի գիտէինք թէ այս բանիս մեջ թէ որ *զայթակղութիւն* մը պատահի, *փարիսական* *զայթակղութիւն* ալ կըսուի . որովհետեւ լսողներուն ու տեսնողներուն թանձր տգիտութենէն կամ նաեւ հնացեալ ջարութենէն կրնայ առաջ գալ, եւ ոչ թէ մեր գովելի եւ օգտաւետ գործողութենէն : Այս գանազանութեան ալ օրինակը ապաքէն Քրիստոս Տերն մեր կուտայ մեզի . որ երբ բարեմիտ աշակերտներն ըսին իրեն թէ « Գիտէս զի Փարիսեցիքն իբրեւ լուսան զբանն՝ զայրակղեցին, » պատասխան տուաւ. « Ամենայն

տունկ գոր ոչ տնկեաց Հայրն իմ երկնաւոր՝ խլեսցի .¹ »
այսինքն ջեմ կրնար՝ Փարիսեցիները ջգայթակղին
ըսելով ճշմարտութիւնը ջքարոգել, ու ետքէն մտած
մարդկային նորածեւութիւններուն դեմ ջպատերագ-
միլ . թող ճրջափ կուգեն գայթակղին :

Բայց, — ըսէ մեկը, — այն քու Փարիսեցի ըսած-
ներդ բաւական գիտուն այ են, եւ ժողովրդեան վրայ
ագղեցութիւն ունենալով՝ ջատին այ գայթակղութեան
պատճառ կրնան ըլլալ : — « Թոյլ տուք գնոսա, կը-
պատասխանէ Տերն մեր . կոյրք են՝ կուրաց առաջ-
նորդ . կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալէ, եւ
երկոքին ի խորխորատ անկանին² : »

— Եթէ այդպէս է, դուք երեքնիդ ապահով էք
արդեօք թէ բռնած ճամբանիդ ջիտակ է :

— Մեր ճամբուն ջիտակ կամ ժուռ ըլլալուն վրայ
կրնայինք տարակուսիլ՝ թէ որ նոր էւ անժանօք ճամ-
բայ մը բռնէինք . բայց որովհետեւ *առաջնորդ հաւա-
տոյ և լուսաւորիչ անճանց մերոց* ունինք մեր սուրբ
հայրապետները, այսինքն գմեճն Գրիգոր էւ իր երա-
նելի որդիքն ու թոռուքը, գտարբն Ներսէս, գտարբն
Սահակ էւ գՄեսրոպ, գերանաշնորհ Թարգմանիչս էւ

¹ Մատթ. ժԵ, 12, 13 :

² Անդ, 14 :

անոնց հետեւողները՝ մինչեւ ի մեծն Խոսրով, ի Նարեկացին Գրիգոր, յԻմաստասերն Յովհաննէս, ի Շնորհալին Ներսէս, ի Լամբրոնացին քաջ եւ յարժանաւոր յաջորդս նոցա, ամենեւին տարակոյս եւ երկբայութիւն չունինք որ բռնած ճամբանիս շիտակ է : Մանաւանդ որ գիտենք թէ այն մեր սուրբ հայրապետաց եւ իմաստուն վարդապետաց գրուածքները ուղղափառական ճանչցուած են նաեւ ի Յունաց եւ յԱսորոց եւ ի Լատինացւոց առ հասարակ, եւ մեր Հայաստանեայցս հնասեր եւ անանդապահ եկեղեցին այն սուրբերուն օրերէն մինչեւ հիմա ոչ նոր վարդապետութիւն մը ընդուներ է ի հաւատոյս, եւ ոչ իսկ եկեղեցական բարեկարգութեան ու ժամակարգութեան մեջ նորածեւութիւն մը ըրեր է ամենեւին . որով եւ իրանամբ կը պարծի ուրիշներուն առջեւը իբրեւ միշտ պատկառելի առաքելական եկեղեցի : Եւ այս ճշմարտութիւնները հրատարակելու միտք ունինք Աստուծով քիչ ժամանակէն ընդարձակ եռամասն Աստուածաբանութեան մը մեջ, յորում Հաւատք եւ Բարեկարգութիւն եւ Արարողութիւնք Հայաստանեայց եկեղեցւոյ տեղն ի տեղը պիտի բացատրուին :

— Հապա որ մինչեւ հիմա հրատարակած գրքերնուդ մեջ այնպիսի նշաններ տուած էք որ այդ խօսքերուն հակառակ կերեւնան, անոնց ինչ պիտի ըսէք :

— Եթէ վերոյիշեալ մեկնութիւնները, եւ խոստացուած Աստուածաբանութեան մեջ տրուելու բացատրութիւնները բաւական չհամարուին այնպիսի կասկածները փարատելու, յայտնի բան է որ պիտի ջղանդադիր առ սեր ճշմարտութեան յետս կոչելու այն խօսքերն որ գրեր ենք կամ պաշարմամբ մտաց, կամ ի հարկեցուցիչ հրամանէ, եւ կամ ի չափազանց հաւատարմութենէ առ քաղաքականութիւն Միաբանութեանն որոյ անդամ էինք¹ :

ԺԷ.

Աստուծոյ եւ աստուծոց նման ընդդիմութիւններ հանող եւ պատասխաններն ընդունող հակառակորդը գար-

¹ Մասնաւոր կերպով մը ազգասիրաց աչքին զարկած է այս կողմանէ իբրեւ կաթուղիկութեան չափազանց պաշտպանութիւն եւ հայութեան պարսաւ՝ վերջին հալածանաց համառօտ պատմութիւնը որ Օսմանեան Պատմութեան Բ հատորին 370 երեսէն մինչեւ 376 երեսը ղրուած է : Բայց այն Պատմութեան հեղինակը հարկ կը համարի զայս միայն յիշեցընել թէ այն կտորը իր շարադրածը չէ. այլ երբոր ինքը հրաժարեր էր գրելէն, Պօլիսէն Մխիթարեանց մեկը շարադրեր յուղարկեր էր, եւ մեծաւորը պատշաճ տեսեր էր որ Օսմանեան Պատմութեան մեջ ըստ այնմ անցուին այն ցաւալի եւ շատ սրբագրութեանց կարօտ անցքերը : Հայերէն լեզուիս հմուտ կարդացողները այն հատուածին շարադրութիւնը թէ որ ուշադրութեամբ դիտեն՝ մեկէն կիմանան թէ որչափ տարբեր է հեղինակին բուն գրչէն ու շարադրութենէն :

մանայի ճարտարութեամբ մը կրճգէ հասատոյ եւ խղճմտանքի մասը, եւ արտաքին՝ բարոյական եւ նիւթական ընդդիմութիւններ կը հանէ առջեւնիս : Զորօրինակ. Պատմածներնէդ կերեւնայ թէ, կըսէ, *զլ/սաւորապէս* հռովմեական առաջնորդաց ձեզի տուած նեղութիւններէն փախչելու կամ ազատելու համար է որ լուսաւորչական առաջնորդաց հովանաւորութեանը կապաւինիք :

— Այո, այն ալ ճշմարիտ է... եւ այնչափ գոհ ենք մեր ըրածին որ կրնանք ըսել թէ մեր հալածիչներուն շնորհակալութիւն ալ ունինք :

— Դնէք գիտեք. միայն լաւ նայեցեք, չըլլայ թէ յետոյ գոջաք՝ անձրեւէ փախանք ու կարկուտի բռնուեցանք ըսելով :

— Դնենք թէ իրաւացի ըլլայ այդ վտանգը. սակայն համարձակ կըսենք որ էթէ հարկ ըլլայ այսուհետեւ ալ մեր անցաւոր կենաց մնացորդը նոյնպիսի նեղութիւններով անցընել՝ ինչ որ մինչեւ հիմա կրեցինք, լաւ կը համարինք այն նեղութիւնները մեր ազգային առաջնորդներուն կողմանէ կրել այսուհետեւ քան թէ օտարներէն եւ օտարացեալ Հայերէ : Դարձեալ կըսենք. այնքան է մեր սրտին եռանդը ի սեր ազգին մերոյ եւ ի մեծարանս անարատ Եկեղեցոյս, որ այս առթով ալ ջենք վախճար կրկնելու. Պօղոսի առաքելոյն սուկայի կարծուած խօսքը թէ « Ուխտիւք խնդրէի նզով

լինել ի Քրիստոսէ վասն եղբարց իմոց եւ ազգականաց
ըստ մարմնոյ : ¹ »

Իսկ անոնց դէմ որ մեր դիտաւորութիւնը կուգեն
դատել դատապարտել՝ ըսելով թէ ըրածնիս ինքնա-
հաւանութիւն , անձնդիրութիւն , շահասիրութիւն ,
փառասիրութիւն եւ երկարօրէն պատասխան տալու
միտք չունինք : Այնպիսի դատողութեանց դէմ մի
միայն գօրաւոր պատասխան գործն ու արդիւնքը
գիտնալով , կը փափաքինք որ եթէ կուգեն առանց
կրից եւ պաշարման դատաստան ընել՝ արդեանց
սպասեն , այնպիսի արդեանց՝ որ միայն անձնուրա-
ցութեան , անշահասիրութեան , խոնարհութեան եւ
ճշմարիտ ազգասիրութեան պտուղ կրնան ըլլալ : Առ-
այժմ այս լաւ գիտնան որ մեր մի միայն մխիթարու-
թիւնը պիտի ըլլայ՝ մինչեւ կեանքերնուս վերջի վայր-
կենին ալ սիրով ճաշակել ազգերնուս օգտին ու սիրոյն
համար քացախն ու լեղին . բաւական է որ կարենանք
ըսել մեր երկնաւոր վարդապետին սովբեցուցածը թէ
« Ծառայք անպիտանք էմք , գոր պարտեաքն առնել՝
արարաք .² » եւ իրեն խաչին վրայ ըսած խօսքը կրկնել
թէ « Ամենայն ինչ կատարեալ է : ³ »

¹ Հռովմ. Թ, 3 .

² Ղուկ. ԺԷ, 10 .

³ Յովհ. ԺԹ, 30 .

քամախարրա և բոլոր քաղաքս մասի շտապիցի մի
ժԸ.

Ո՛հ, քանի անգամ տար տար արտուներէր քա-
փելով ու հեղձամղձուկ հառաչանքներով լսէր ու
կրկներ էնք սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ
այն սրտառուչ խօսքերը թէ « Ողորմիմ քեզ, եկեղեցի
« Հայաստանեայց, խրթնացեալ ի բարեզարդութենէ
« բեմբին, ի քաջէն զրկեալ հովուէ եւ հովուակցէ :
« Ոչ եւս տեսանեմ զբանաւոր քո հօտ ի վայրի դա-
« լարւոջ եւ առ ջուրս հանգստեան տաճեալս, եւ ոչ
« ի փարախ հաւաքեալ՝ զգոշանալով ի գայլոց, այլ
« ցրուեալս անապատաց եւ գահավիժութեանց... Այժմ
« մարտք ի ներքուստ եւ արհաւիրք արտաքուստ :
« արհաւիրք ի հեթանոսաց եւ մարտք ի հերձուածո-
« ղաց, եւ խորհրդականն չէ ի միջի՝ որ խրատեր եւ
« յարդարեր ի պատերազմ. աւանդ զրկանացս, աւանդ
« թշուառական պատմութեանս :¹ » Քանի քանի ան-
գամ որ կարդացեր ու լսէր էնք, կըսէմ, ասոնք եւ
ասոնց նման խորհրդաւոր խօսքերն ու մարգարեական
ողբերը, սրտերնիս կտրտեր է եւ ըսէր էնք մենք մեզի
եւ իրարու թէ ինչ պատճառաւ, ինչ յանցանքի համար,
ինչ պակասութեանը համար եկեր են այսքան խեղ-

¹ Խորեն. Գ, 68 :

ճութիւնները մեր անարատ Եկեղեցւոյն վրայ, եւ չենք
ըսեր մեզի՝ այլ մեզմէ շատ արեւի կարողութեան տէր
անձանց ինչո՞ւ արգելած պիտի՛ըլլար՝ ձեռքերնէն եկած
ծառայութիւններն ընելու անոր : Ի՞նչ է կամ ո՞վ է այս
խեղճութեան պատճառ . ուսկի՞ց էկեր է վրանիս այս
անտանելի բռնութիւնը...

Եւ անա ուր ուրեմն արիացոյց զմեզ Աստուած
նորի տակ առնելու ամեն տեսակ արգելքները, խզե-
լու մեկդի նետելու այն անիրաւ կապերը, մարդկային
անարգ նկատմունքները, տղայական սնոտի վախերը,
տգիտական նախապաշարմունքները, կուսակցութեան
հոգիները, հնացեալ ատելութեան կիրքերը... Անոնք
ամենն այ մեր ազգասիրութեան բոցավառ հրատին
առջեւը խօխ ու խծուծ եղան, մեր հայրենասէր
հոգւոյն ուժին առջեւը փոշիի պէս ցնդեցան :

ԺԹ.

Այս է անա եւ այս միայն է, եղբարք, մեր վերա-
դարձը ընդ հովանեաւ Լուսաւորչական սուրբ արձույ
Հայաստանեայց Եկեղեցւոյ՝ հանդերձ պատմութեամբն
ու պատճառներովը : Փափաքելի է մեզ եւ ուխտիւք
խնդրելի՝ որ մեր օրինակին հետեւողները բազմանան,
եւ մեզմէ բիրապատիկ արեւի օգտակար ծառայու-

թիւններ ընեն ազգիս եւ եկեղեցւոյ.¹ Բայց թէ որ միս-
մինակ այ մնանք, մեր վիճակէն գոհ պիտի ըլլանք .
ասոր տարակոյս չկայ. վասն զի գիտենք որ Աս-
տուածն ճշմարտութեան եւ արդարութեան հետեր-
նիս է, եւ հետերնիս պիտի ըլլայ միշտ՝ թէ որ մեր
անճնանութիւնը նահատակութիւնը կարենանք հաճոյ
ընել իրեն. այն ատեն կրնանք ըսել թէ երանի՛ մեզի :
Երանի՛ մեզ թէ որ Հայաստանեայց եկեղեցւոյ քաջըն-
թաց հովիւներուն ու շնորհալից հովուապետներուն
սրբազան ոսկորները ցնծան ու գուարթանան իրենց
սքանչելագործ եւ խոնարհ շիրիմներուն մէջ՝ ընդ
հովանեաւ. ամայացեալ եկեղեցեաց եւ նուագեալ վա-
նորից Հայաստան աշխարհին, զգալով այս պարա-
զաներուս մէջ ճշմարիտ ազգասիրաց աչուրներէն
աղբերացեալ՝ մխիթարութեան եւ խնդութեան քաղցր
արտասուքները : Իսկ իրենց ամբիժ հոգիները որ ան-
դադար կըբարեխօսեն յերկինս վասն հաստատութեան
եւ պայծառութեան սրբոյ Հայաստանեայց եկեղեցւոյ՝

— ազգի գեղեցիկ, գգաւոր, ճշմարիտ սրբաբան անձնակազմը —

¹ Այս իրաւացի ու բնական փափաքը արգելք պիտի չըլլայ
ամենեւին մեր ազատամիտ ազգասիրութեանը եւ քրիստո-
նեական ոգւոյն . որով եթէ հռովմեական Հայերէն այ մեկը յան-
կարծ յօժարի իր որդւոյն դաստիարակութիւնը մեզի յանձնել,
բայց պահանջէ որ ըստ հռովմեական դասանութեան կրթութի որ-
դին ուրիշ մեր գաղղիացի աշակերտներուն հետ, իր կամքը
անվրեպ կըկատարուի՝ գաղղիացի քահանայի հրահանգներովը :

օգնական եւ պաշտպան ըլլան մեր եռանդուն եւ կամակար ջանիցն ու ճգնութեանը ի բարգաւաճել իրենց աշխատութեան սերմանքը :

Հնապա, ճվ գորովագութ Մայր մեր հարագատ, Հայաստանեայց սուրբ Եկեղեցի, դուն որ ատենով Գրիգորեանց եւ Ներսիսեանց, Սահակեանց եւ Ղեւոնդեանց պէս ընտիր ընտիր հօտապետաց քրտնաջան աշխատութեամբը հիմնեցար, եւ անթիւ նահատակաց վարդագոյն արեամբը ի սկզբանէ հետէ վայելչապէս պայծառացար, գուարթ ակնարկէ նաեւ այս քո անագանիդ ծնունդ սիրասուն որդւոցդ վրայ՝ որ հեռանոր երկիրներէ ինքնայօժար սիրով գիրկդ կը վազեն : Քու անհամար աստուածահաճոյ գաւակացդ՝ առաջնոց եւ վերջնոց՝ մեծամեծ արդեամբքը ընդունելի ըրէ Աստուծոյ այն գորովաշարժ մաղթանքն որ քեզի հետ եւ ի գաւիթս քո կերգենք այսուհետեւ եռանդուն սրտիւ. « Հեղմամբ արեան սրբոց քոց հօտապետաց՝ « գեկեղեցւոյ քոյ ցրուեալ մանկունս ժողովեա յուրա- « խութիւն, գվարատեալս տրտմութեամբ եւ արտա- « սուաց յորդահոս բղիւմամբ, փրկութեան մերոյ « պարգեաց բաշխող : ¹ »

¹ Շարական սրբոց Ղեւոնդեանց :




12	—
22	16
28	26
35	36
40	46
45	52
52	62
58	72
65	82
72	92
78	102
85	112
92	122
98	132
105	142
112	152
118	162
125	172
132	182
138	192
145	202
152	212
158	222
165	232
172	242
178	252
185	262
192	272
198	282
205	292

ԳԼԽԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ

Ա.	Կրօնական կոնիներուն մեր ազգին ըրած վնասները.	4
Բ.	Սյն վնասներուն ո՛յք են զլխաւոր պատճառ.....	5
Գ.	Վենետկոյ Մխիթարեանց վերջին յայտարարութիւնը առ Պապն Հռովմայ.....	8
Դ.	Երից վարդապետացս անորոշ վիճակը.....	9
Ե.	Մեր տպագրեալ Յայտարարութեան կեղակարծ երեւցած մեկ խօսքը.....	11
Զ, Է.	Ինքզինքնիս այն միջոցին հռովմեական ճանչցրնե- լուն իարկը.....	12
Ը.	Հաւատոյ եական մասունքը ո՛յք են.....	15
Թ.	Հռովմեական առաջնորդաց մեզի դեմ հանած հալա- ծանքին սաստկանալը.....	17
Ժ.	Մեր հպատակութեան գիրը առ Ամենապատիւ Սրբա- զան Պատրիարքն Կոստանդնուպօլսոյ.....	18
ԺԱ.	Գիր հպատակութեան առ Աստուածարեալ Կարու- ղիկոսն ամենայն Հայոց.....	21
— Պատասխանի Սրբազան Պատրիարքին Կոստան- դնուպօլսոյ.....		29

500

	էջ
— Վկայագիրք Սրբազան Պատրիարքին.....	31
ԺԲ. Սիրալիր ընդունելութիւն երից վարդապետացս յագգես Հայոց որ ի Կոստանդնուպօլիս.....	33
ԺԳ. Մեր վերադարձին պատճառել կրցած զանազան խորհրդածութիւնները.....	33
ԺԴ. Քանի մը մեղադրական խօսքերու համառօտ պատասխաններ.....	39
ԺԵ. Մինչեւ ցայժմ հիմակուրնէն տարբեր ոճ բռնելնուս պատճառները.....	42
ԺԶ. Գայթակղութեան վտանգէն զմեզ վախցընել ուզող բարեմտաց պատասխան.....	44
ԺԷ. Մեր դիտաւորութիւնը չարաչար դատողաց խօսքերուն լուծմունք.....	47
ԺԸ. Թե՛ որքան գոհ ենք մեր ըրած գործողութեանը վրայ.....	50
ԺԹ. Ազգասիրական եռանդնիս.....	51



Տպագրութիւն Արմ. ի Տպար. ՎԱԼՏԵՐԻ, Փարիզ. ի փող. Պոնաբարթ , 44.
Paris. — Typographie arménienne de WALDER, rue Bonaparte, 44.

2002

4405

4266